Հաստատված է
ԵՊՀ Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի
2016 թ. մարտի 24-ի նիստում ընդունված N 4/4 որոշմամբ
Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի ԳԽ նախագահ՝
Մ. Ա. Գրիգորյան _____

ԵՊՀ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՐԿՐԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ 2016-2020 ԹԹ. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ-ՊԼԱՆ)

Երևան-2016

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ

I. ՈՐԱԿՅԱԼ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Գործողություն/ միջոցառում/ ծրագիր	2016		2017		2018		2019		2020	
	I Կիս. (01-06)	II Կիս. (07-12)	I Կիս. (01-06)	II կիս. (07-12)	I Կիս. (01-06)	II Կիս. (07-12)	I Կիս. (01-06)	II Կիս. (07-12)	I Կիս. (01-06)	II Կիս. (07-12)
Խնդիր 1.1. Իրականացնել կրթական ծրագրերի կառուցվածքային և բովանդակային վերափոխում՝ որակավորումների ազգային շրջանակին և աշխատաշուկայի արդի պահանջներին համահունչ:										
1. Վերամշակել «Աշխարհագրություն» և «Երկրաբանություն» մասնագիտությունների մագիստրոսի կրթական ծրագրերը («Հասարակական աշխարհագրություն», «Ջրաօդերևութաբանություն», «Քարտեզագրություն և կադաստրային գործ», «Երկրաֆիզիկա, ջրաերկրաբանություն և ճարտարագիտական երկրաբանություն», «Օգտակար հանածոների հանքավայրերի երկրաբանություն և հետախուզում»)՝ որակավորումների ազգային շրջանակին և միջազգային առարկայական հենանիշերին (բենչմարք) համապատասխան:		X	X							
2. Ստեղծել բակալավրի կրթական ծրագրի ղեկավարի «ինստիտուտ»՝ ֆակուլտետում գործող «Երկրաբանություն», «Աշխարհագրություն», «Քարտեզագրություն և կադաստրային գործ», «Սերվիս» բակալավրի մասնագիտական կրթական ծրագրերի պատշաճ մշակման և իրականացման նպատակով:		X								
3. Վերամշակել «Երկրաբանություն», «Աշխարհագրություն», «Քարտեզագրություն և կադաստրային գործ» և «Սերվիս» բակալավրի մասնագիտական կրթական ծրագրերը որակավորումների ազգային շրջանակին և միջազգային առարկայական հենանիշերին (բենչմարք) համապատասխան:		X	X	X						
4. Մշակել և իրականացնել միջմասնագիտական մագիստրոսական կրթական նոր ծրագրեր:		X	X	X	X	X	X	X	X	X

5. Մշակել և իրականացնել ուսումնական (դաշտային, երթուղային և այլն) և արտադրական պրակտիկաների բարելավմանն ուղղված համալիր միջոցառումների ծրագիր՝ հատկացնելով անհրաժեշտ նյութական և ֆինանսական ռեսուրսներ:		X	X	X	X	X	X	X	X	X
5.1. Բակալավրի մասնագիտական կրթական ծրագրերի ուսումնական պրակտիկաների կազմակերպման, անցկացման և գնահատման գործընթացների կանոնակարգման և արդյունավետության բարձրացման նպատակով մշակել և գործարկել համապատասխան կարգեր, ուղեցույցներ, մեթոդական ցուցումներ և ձեռնարկներ: 5.2. Արտադրական պրակտիկաների արդյունավետ կազմակերպման և անցկացման նպատակով շարունակել և ընդլայնել համագործակցությունը մասնավոր բիզնես-սեկտորի և պետական կառույցների հետ:										
6. Մշակել «Ֆիզիկական աշխարհագրություն և լանդշաֆտային էկոլոգիա», «Սերվիսային գործունեության կազմակերպում», «Կայուն զբոսաշրջություն» մագիստրոսի կրթական ծրագրեր որակավորումների ազգային շրջանակին և միջազգային առարկայական հենանիշերին (բենչմարք) համապատասխան:		X	X							
Խնդիր 1.2. Բարելավել դասավանդման, ուսումնառության և գնահատման գործընթացները:										
1. Զարգացնել մանկավարժական առաջավոր փորձի խրախուսման և տարածման ներհամալսարանական մեխանիզմները, նպաստել ուսուցման ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների ներդրմանը:	X	X	X	X	X	X	X	X	X	X
2. Կրթափորձի կարգով ներդնել արդյունահեն և ձևավորող (ֆորմատիվ) գնահատման նոր ձևեր՝ հիմնված ակնկալվող կրթական վերջնարդյունքների գնահատման և աշխարհագրության ու երկրաբանության մասնագիտական առանձնահատկությունների վրա: Ստեղծել համապատասխան մեթոդական հենք և ձեռնարկներ:								X	X	X
3. Ուսումնասիրել դասավանդման, ուսումնառության և հետազոտության ինտեգրման (փոխկապակցման) ժամանակակից փորձը՝ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերում կիրառելու նպատակով:	X	X	X	X	X	X	X	X	X	X

4. Մշակել և ներդնել ակադեմիական ազնվությունն ապահովող մեխանիզմներ, այդ թվում՝ ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի (ատենախոսությունների) գրագողությունը կանխելու նպատակով:	X	X	X	X	X	X				
4.1. Ֆակուլտետի ամբիոններում ստեղծել (առկայության դեպքում շարունակել) ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պահպանման թղթային և էլեկտրոնային արխիվներ, ինչպես նաև թեմաների վերաբերյալ միասնական էլեկտրոնային տեղեկատվական բազա: 4.2. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի ներկայացման վերաբերյալ հաստատել հստակ պահանջներ, այդ թվում օգտագործված գրականության ցանկի և հղումների ճիշտ կատարման ուղղությամբ: 4.3. Ստեղծել հատուկ հանձնաժողովներ ըստ իրականացվող կրթական ծրագրերի ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների որակի և այլ հատկանիշների ստուգման նպատակով: 4.4. Լրջորեն հետևել աշխատանքների արտաքին գրախոսության իրականացմանը և քայլեր ձեռնարկել ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության ընթացքում գրախոսների (ընդիմախոսների) ներկայությունն ապահովելու ուղղությամբ:										
Խնդիր 1.3. Բարձրացնել որակի ներքին ապահովման համակարգի կառույցների գործունեության արդյունավետությունը:										
1. Փորձնական սկզբունքով ստեղծել «Աշխարհագրություն», «Երկրաբանություն», «Քարտեզագրություն և կադաստրային գործ», «Սերվիս» մասնագիտությունների գծով գործող բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի ուսանողական հանձնաժողովներ՝ ուսանողական հարցումների արդյունքներին հետամուտ լինելու և ծրագրերի որակի վերաբերյալ հետադարձ կապն ապահովելու համար: Հաջողված փորձը տարածել բոլոր ծրագրերում:	X	X								
2. Գործադրել կրթական ծրագրերի ընթացիկ մշտադիտարկման (մոնիթորինգի) և պարբերական վերանայման կարգը մագիստրոսի բոլոր ծրագրերի համար:								X	X	X
3. Գործադրել դասախոսական կազմի գործունեության բազմագործոն գնահատման կարգը ֆակուլտետի բոլոր ամբիոններում:			X	X	X	X	X			

4. Պարբերաբար իրականացնել ուսումնառության ռեսուրսների գնահատում՝ ֆակուլտետում գործող ամբիոններում, լաբորատորիաներում և կենտրոններում:	X		X		X		X		X	
Խնդիր 1.4. Ապահովել տեղեկատվական տեխնոլոգիաների ընդլայնված և արդյունավետ օգտագործումը կրթական գործընթացում:										
1. Վերապատրաստել ֆակուլտետի դասախոսական կազմը՝ ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսների ստեղծման և մատուցման համար:			X	X	X	X	X	X	X	X
2. Ապահովել կրթական ծրագրերն ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսներով:						X	X	X	X	X
5. Հեռակա ուսուցման դասընթացներն ապահովել համապատասխան էլեկտրոնային ռեսուրսներով:	X	X	X	X	X	X	X	X	X	X
6. Կանոնակարգել և ֆակուլտետում ներդնել առցանց եղանակով իրականացվող դասընթացներ:	X	X	X	X	X	X	X	X	X	X

II. ԱՐԴԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Գործողություն/ միջոցառում/ ծրագիր	2016		2017		2018		2019		2020	
	I Կիս. (01-06)	II Կիս. (07-12)	I Կիս. (01-06)	II կիս. (07-12)	I Կիս. (01-06)	II Կիս. (07-12)	I Կիս. (01-06)	II Կիս. (07-12)	I Կիս. (01-06)	II Կիս. (07-12)
Խնդիր 2.1. Նպաստել հետազոտությունների ծավալի մեծացմանը և հետազոտական նախագծերում դասախոսական կազմի և սովորողների ներգրավվածության ընդլայնմանը:										
1. Իրականացնել հետազոտական գործունեության գնահատում՝ առաջնորդվելով գիտական հրատարակումներով, դրանց վրա կատարված հղումներով և այլ ընդունված ցուցանիշներով:			X	X	X	X	X	X	X	X
2. Ապահովել և ընդլայնել գիտահետազոտական ծրագրերում ֆակուլտետի ասպիրանտների և մագիստրանտների մասնակցությունը:	X	X	X	X	X	X	X	X	X	X
3. Խրախուսել ՈՒԳԸ շրջանակներում ուսանողների գիտահետազոտական աշխատանքների ղեկավարումը:	X	X	X	X	X	X	X	X	X	X
4. Բարելավել հետազոտական բաղադրիչի իրականացումը բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերում:	X	X	X	X	X	X	X	X	X	X
Խնդիր 2.2. Զարգացնել հետազոտական համագործակցությունը հանրապետության գիտահետազոտական ինստիտուտների, բուհերի և ձեռնարկությունների հետ:										
1. Ներգրավել հանրապետության առաջատար գիտաշխատողներին մագիստրանտների և ասպիրանտների հետազոտական աշխատանքների ղեկավարման գործում:		X	X	X	X	X	X	X	X	X
2. Աջակցել գիտահետազոտական կենտրոնների հետ համատեղ ծրագրերի իրականացմանը:	X	X	X	X	X	X	X	X	X	X
3. Նպաստել ձեռնարկությունների մասնակցությամբ հետազոտական և կրթական ծրագրերի իրականացմանը:	X	X	X	X	X	X	X	X	X	X
Խնդիր 2.4. Համալսարանում բարձրագույն կրթության 3-րդ աստիճանի չափանիշները համապատասխանեցնել Զալցբուրգյան սկզբունքներին:										
1. Նպաստել ասպիրանտների միջմասնագիտական, ներհանրապետական և միջազգային համագործակցությանը:	X	X	X	X	X	X	X	X	X	X

III. ՀԱՆՐԱՅԻՆ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գործողություն/ միջոցառում/ ծրագիր	2016		2017		2018		2019		2020	
	I Կիս. (01-06)	II Կիս. (07-12)	I Կիս. (01-06)	II կիս. (07-12)	I Կիս. (01-06)	II Կիս. (07-12)	I Կիս. (01-06)	II Կիս. (07-12)	I Կիս. (01-06)	II Կիս. (07-12)
Խնդիր 3.1. Ապահովել հասարակայնության հետ կապերի հետագա զարգացումը և հանրային պատասխանատվության բարձրացումը:										
1. Զարգացնել հանրային կապերի միասնական համակարգը, բարձրացնել հանրային կապերի ներբուհական ցանցի արդյունա-վետությունը:	X	X	X	X	X	X	X	X	X	X
2. Ընդլայնել հասարակության տարբեր խմբերի հետ հետադարձ կապը և զարգացնել մշտադիտարկման համակարգը:	X	X	X	X	X	X	X	X	X	X
Խնդիր 3.2. Զարգացնել լրացուցիչ կրթության միասնական համակարգը՝ ապահովելով հանրային պահանջարկի և համալսարանական առաջարկի միջև փոխկապակցությունը:										
1. Մշակել հանրային պահանջարկին համապատասխան լրացու-ցիչ կրթության նոր ծրագրեր՝ ընդլայնելով պետական ու մասնավոր կազմակերպությունների հետ գործընկերային կապերը:				X	X	X	X	X	X	X

IV. ՈՐԱԿՅԱԼ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Գործողություն/ միջոցառում/ ծրագիր	2016		2017		2018		2019		2020	
	I Կիս. (01-06)	II Կիս. (07-12)	I Կիս. (01-06)	II կիս. (07-12)	I Կիս. (01-06)	II Կիս. (07-12)	I Կիս. (01-06)	II Կիս. (07-12)	I Կիս. (01-06)	II Կիս. (07-12)
Խնդիր 4.1. Զարգացնել դասախոսական կազմի ներուժը:										
1. Նպաստել դասախոսական կազմի որակավորման բարձրացման ծրագրի կատարելագործմանը՝ մասնագիտական նոր մոդուլ-դասընթացների մշակմամբ: «Աշխարհագրություն» և «Երկրաբանություն» մասնագիտություններով մշակել 10-ից ավել մոդուլ-դասընթացներ՝ ինչպես ֆակուլտետի, այնպես էլ ԵՊՀ բնագիտական մյուս ֆակուլտետների դասախոսների համար:	X									
2. Սահմանել ֆակուլտետի մասնագիտական կրթական ծրագրերին համապատասխան դասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջներ՝ ըստ ծրագրի կրթական վերջնարդյունքների:		X	X	X						

V. ՈՐԱԿՅԱԼ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

Գործողություն/ միջոցառում/ ծրագիր	2016		2017		2018		2019		2020	
	I Կիս. (01-06)	II Կիս. (07-12)	I Կիս. (01-06)	II կիս. (07-12)	I Կիս. (01-06)	II Կիս. (07-12)	I Կիս. (01-06)	II Կիս. (07-12)	I Կիս. (01-06)	II Կիս. (07-12)
Խնդիր 5.2. Զարգացնել ուսումնագիտական գործընթացի իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվական համակարգերն ու գրադարանային ենթակառուցվածքները:										
1. Արդիականացնել, տեխնոլոգիապես ու տեխնիկապես վերազինել ֆակուլտետի ուսումնագիտական լաբորատորիաներն ու գիտական նիստերի դահլիճը:			X	X	X	X				
2. Ստեղծել ֆակուլտետում գործող մասնագիտական կրթական ծրագրերին համապատասխան վիրտուալ լաբորատորիա՝ հագեցված տեխնիկական միջոցներով, իերնց համապատասխան ծրագրային ապահովումներով և գրականության էլեկտրոնային ռեսուրսներով:					X	X	X	X		

VI. ՈՐԱԿՅԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գործողություն/ միջոցառում/ ծրագիր	2016		2017		2018		2019		2020	
	I Կիս. (01-06)	II Կիս. (07-12)	I Կիս. (01-06)	II կիս. (07-12)	I Կիս. (01-06)	II Կիս. (07-12)	I Կիս. (01-06)	II Կիս. (07-12)	I Կիս. (01-06)	II Կիս. (07-12)
Խնդիր 6.1. Զարգացնել ուսանողական օժանդակ ծառայությունները՝ խթանող կրթական միջավայր ապահովելու նպատակով:										
1. Բազմազանեցնել մարզամշակութային ծրագրերը, զարգացնել ուսանողական ակումբային համակարգը՝ շեշտադրելով ինտելեկտուալ, բնապահպանական, երկրագիտական և հայրենաճանաչողական բնույթի միջոցառումները:	X	X	X	X	X	X	X	X	X	X
1.1. Բարձրացնել ուսանողների շրջանում մասնագիտության նկատմամբ ուշադրությունը՝ ձեռնարկելով տարաբնույթ մարզամշակութային միջոցառումներ մասնագիտական տոն օրերը (երկրաբանի, աշխարհագետի, ջրաբանի, օդերևութաբանի, բնապահպանի և այլն) առանձնահատուկ տոնելու և ուսումնական դաշտային պրակտիկաների ընթացքում հանգստի ժամանակը ճիշտ և արդյունավետ կազմակերպելու նպատակով:										
2. Խթանել ուսանողների կարիերայի ծառայությունները՝ զարգացնելով լրացուցիչ պրակտիկայի (ինտերնշիփ), խորհրդատվության և ուսուցողական դասընթացների համակարգը:	X	X	X	X	X	X	X	X	X	X
3. Ներդնել հեռավար եղանակով իրականացվող խորհրդատվությունների համակարգ առանձնահատուկ կարիքներ ունեցող ուսանողների համար:			X	X	X	X				
4. Ապահովել ֆակուլտետի շրջանավարտների հետ շարունակական կապը և խթանել շրջանավարտների կողմից Համալսարանին և ֆակուլտետին տարաբնույթ աջակցության նախաձեռնությունները:			X	X	X	X	X	X	X	X

VII. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԲԱԶՄԱԶԱՆԵՑՈՒՄ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆ

Գործողություն/ միջոցառում/ ծրագիր	2016		2017		2018		2019		2020	
	I Կիս. (01-06)	II Կիս. (07-12)	I Կիս. (01-06)	II կիս. (07-12)	I Կիս. (01-06)	II Կիս. (07-12)	I Կիս. (01-06)	II Կիս. (07-12)	I Կիս. (01-06)	II Կիս. (07-12)
Խնդիր 7.1. Զարգացնել ընդունելության մարքեթինգային գործընթացները՝ դիմորդների հոսքի պահպանման և մեծացման նպատակով:										
1. Զարգացնել դիմորդների մասնագիտական կողմնորոշման համար միասնական տեղեկատվական համակարգը:	X	X	X	X	X	X	X	X	X	X
2. Աջակցել ԵՊՀ-ում և ՀՀ մարզերում դպրոցների ավարտական դասարանների աշակերտների համար՝ «Աշխարհագրություն» առարկայի գծով ամենամյա օլիմպիադաների անցկացմանը:	X	X	X	X	X	X	X	X	X	X
3. Ֆակուլտետում պարբերաբար կազմակերպել «Ամառային դպրոցներ» «Աշխարհագրություն», «Երկրաբանություն», «Սերվիս» մասնագիտությունների գծով՝ հանրապետության ավագ դպրոց-ների աշակերտների համար:	X	X	X	X	X	X	X	X	X	X
4. Ավագ դպրոցների և քոլեջների սովորողների համար ֆակուլտետում կազմակերպել ամենամյա «Բաց դռների օրեր» և ճանաչողական այցեր:	X	X	X	X	X	X	X	X	X	X
5. Ակտիվացնել դիմորդների հավաքագրման աշխատանքները ՀՀ բոլոր մարզերում և այնտեղ գործող՝ դիմորդների հետ տարվող աշ-խատանքների գծով ԵՊՀ ներկայացուցչություններն ապահովել Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվական նյութերով:	X	X	X	X	X	X	X	X	X	X
6. Ընդլայնել ԵՊՀ-ի հետ պայմանագրային հիմունքներով համա-գործակցող ավագ դպրոցների շրջանակը: Շարունակել ֆակուլտետի դասախոսական կազմի կողմից մայրաքաղաքի ավագ դպրոցներում դասընթացների, իսկ մարզային դպրոցներում՝ առանձին դասախոսությունների իրականացումը:	X	X	X	X	X	X	X	X	X	X
7. Ֆակուլտետի դասախոսներին առավելագույնս ներգրավել հանրակրթական ուսումնական հաստատություններում ակնար-կային և բովանդակային դասախոսությունների, թեմատիկ քննար-կումների կազմակերպման գործում:	X	X	X	X	X	X	X	X	X	X
8. Ֆակուլտետին կից ստեղծել «Պատանի աշխարհագետի և երկրաբանի» դպրոց:		X	X	X	X	X	X	X	X	X

VIII. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ, ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Գործողություն/ միջոցառում/ ծրագիր	2016		2017		2018		2019		2020	
	I Կիս. (01-06)	II Կիս. (07-12)	I Կիս. (01-06)	II կիս. (07-12)	I Կիս. (01-06)	II Կիս. (07-12)	I Կիս. (01-06)	II Կիս. (07-12)	I Կիս. (01-06)	II Կիս. (07-12)
Խնդիր 8.1. Ապահովել Համալսարանի ֆինանսական միջոցների անհրաժեշտ ներհոսքը՝ բազմազանեցնելով դրանց աղբյուրները և մեծացնելով ծավալները:										
1. Նպաստել ԵՊՀ վճարովի ծառայությունների ընդլայնման ու կանոնակարգման գործընթացին:	X	X	X	X	X	X	X	X	X	X
2. Ապահովել շրջանավարտների և այլ շահառուների հետ Համալսարանի և ֆակուլտետի շարունակական կապը՝ խրախուսելով նրանց կողմից Համալսարանին ֆինանսական, նյութական և այլ բնույթի աջակցության նախաձեռնությունները:	X	X	X	X	X	X	X	X	X	X
3. Ուսումնասիրել ԵՊՀ և աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի բիզնես հնարավորությունները, մշակել ու կենսագործել տարաբնույթ բիզնես ծրագրեր՝ հանքարդյունաբերության, բնական ռեսուրսների արդյունավետ կառավարման և շրջակա միջավայրի պահպանման, ինչպես նաև աշխարհագրության ու երկրաբանության ոլորտին առնչվող այլ ուղղություններով:	X	X	X	X	X	X	X	X	X	X
Խնդիր 8.3. Կատարելագործել Համալսարանի իրավական դաշտը և կառավարման համակարգը:										
1. Ներքին իրավական ակտերը համապատասխանեցնել Համալսարանի նոր կանոնադրությանը:	X	X	X	X						
2. Ներդնել կառուցվածքային ստորաբաժանումների ներքին աուդիտի համակարգ:	X	X	X	X	X	X	X	X	X	X
Խնդիր 8.4. Ապահովել համալսարանական գործընթացների թափանցիկությունը՝ նվազեցնելով կոռուպցիոն ռիսկերը:										
1. Մեծացնել ուսանողների գիտելիքների գնահատման գործընթացի թափանցիկությունը, բարձրացնել կիրառվող գնահատման համակարգի, չափանիշների և ընթացակարգերի վերաբերյալ ուսանողների իրազեկվածության մակարդակը:	X	X	X	X	X	X	X	X	X	X
2. Կազմակերպել հակակոռուպցիոն տեխնոլոգիաների և դրանց կիրառման հմտությունների վերաբերյալ ուսումնական մոդուլներ:	X	X	X	X	X	X				

IX. ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ ԵՎ ԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Գործողություն/ միջոցառում/ ծրագիր	2016		2017		2018		2019		2020	
	I Կիս. (01-06)	II Կիս. (07-12)	I Կիս. (01-06)	II կիս. (07-12)	I Կիս. (01-06)	II Կիս. (07-12)	I Կիս. (01-06)	II Կիս. (07-12)	I Կիս. (01-06)	II Կիս. (07-12)
Խնդիր 9.1. Զարգացնել Համալսարանի միջազգայնացմանը նպաստող քաղաքականությունը:										
1. Ստեղծել հրավիրյալ պրոֆեսորի ինստիտուտ:	X	X	X	X	X	X	X	X	X	X
Խնդիր 9.2. Զարգացնել միջազգայնացման գործընթացները կրթական ոլորտում:										
1. Զարգացնել օտարերկրյա բուհերի հետ համագործակցությունը՝ կրկնակի դիպլոմով համատեղ մագիստրոսական ծրագրերի իրականացման ուղղությամբ:		X	X	X	X	X	X	X	X	
1.1. Մշակել և իրականացնել համատեղ «Կիրառական ջրաօդերևութաբանություն» միջազգային մագիստրոսական ծրագիրը ԵՊՀ-ի և Ռուսական պետական ջրաօդերևութաբանական համալսարանի (ՌՊՋՀ, Սանկտ Պետերբուրգ) միջև: 1.2. Զարգացնել համագործակցությունը ֆակուլտետի մյուս մասնագիտություններով ևս միջազգային մագիստրոսական համատեղ կրթական ծրագրերի մշակման ուղղությամբ:										
2. Զարգացնել օտարերկրյա բուհերի (Սանկտ-Պետերբուրգ, Մոսկվա, Տոմսկ և այլն) հետ համագործակցությունը՝ ուսումնական և արտադրական պրակտիկաների շրջանակներում ուսանողների փոխանակման ծրագրերի իրականացման ուղղությամբ:	X	X	X	X	X	X	X	X	X	